ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«12» ապրիլի 2010թ. N ---Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԽՍՀՄ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՎԱՐՊԵՏ, ԾԱՆՐԱՄԱՐՏԻԿ ՌՈՒԲԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

Տալ համաձայնություն ԽՍՀՄ վաստակավոր վարպետ, ծանրամարտիկ Ռուբեն Մանուկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Աբովյան 48 հասցում տեղադրելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախաձեռնության /որոշման/ հեղինակ
Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ **Գագիկ Սանթրոսյան**

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԽՍՀՄ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՎԱՐՊԵՏ ՌՈՒԲԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիայի միջնորդությունը՝ ԽՍՀՄ վաստակավոր վարպետ, աշխարհի ռեկորդակիր, ծանրամարտիկ Ռուբեն Մանուկյանի ծննդյան 100–ամյակի կապակցությամբ։

Հարցը քննարկվել է Երևանի ավագանու կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի 2010թ. ապրիլի 1-ի նիստում և քվեարկության արդյունքում անցել միաձայն։

Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող Աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ՝ **Գագիկ Սանթրոսյան**